HAL
open science

[redacted]

Koryun Atoyan, Sos Khachikyan

To cite this version:

Koryun Atoyan, Sos Khachikyan. [redacted]. The socio-economic development of regions in the Republic of Armenia, Armenian State University of Economics, Yeghegnadzor branch, 2014, Yeghegnadzor, Armenia. pp.11-16. ⟨hal-03284487⟩

HAL Id: hal-03284487

https://hal.science/hal-03284487v1

Submitted on 12 Jul 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

Autorisation HAL

HAL Authorization

Կորյուն Աթոյան, *տ.գ.դ., պրոֆեսոր*
Սոս Խաչիկյան, *տ.գ.թ., դոցենտ*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՀ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Հայաստանի Հանրապետությունում զբաղվածության խնդիրը մշտապես եղել է հրատապ: Տարբեր ժամանակներում այդ խնդիրն առնչվել է տարբեր երևույթների հետ, իսկ այժմ բավականին արդիական է զբաղվածության և կրթության միջև կապի դրսևորումները: Այդ կապին առնչվող հետազոտությունները և պաշտոնական հրապարակումները մեր հանրապետությունում բավականին սուղ են, սակայն պարզ դիտարկումները ցույց են տալիս, որ կրթություն ստացողների մեծ մասը դժվարությամբ է գտնում մասնագիտական աշխատանք: Դա առավելապես վերաբերում է բարձրագույն կրթության ոլորտին: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի հետազոտության համաձայն ՀՀ-ում բարձրագույն կրթության դիպլոմը չի հանդիսանում աշխատանք գտնելու երաշխիք: Դա նշանակում է, որ բարձրագույն կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերի և աշխատաշուկայի պահանջների միջև կա էական խզում, ինչն ընդգծվել է տարբեր հրապարակումներում: Այդ երևույթն առավել ցայտուն է ՀՀ մարզերում գործող բուհերի և աշխատաշուկայի միջև, քանի որ մարզերում գործունեություն իրականացնող պետական և մասնավոր կառույցներն ու կազմակերպությունները բավականին քիչ են, իսկ մարզային բուհերը՝ ելնելով իրենց մասնագիտությունների առանձնահատկություններից, քիչ են փոխկապված այդ կազմակերպություններին:

Ակնհայտ է, որ բուհական համակարգի կրթական և առարկայական ծրագրերի բովանդակությունը հիմնականում տեսական բնույթի են: Այդ հանգամանքը ոչ միայն հնարավորություն չի տալիս ուսանողին ուսումնառության ամբողջ ընթացքում ձևավորվել որպես գործնական աշխատանքին պատրաստ աշխատուժ, այլև տեսական բնույթի գիտելիքները շատ հաճախ կիրառելի չեն գործնական աշխատանքի մեջ:

Պետք է նշել, որ այս առումով գոյություն ունի ավելի գլոբալ խնդիր: Խոսքը վերաբերում է այն հանգամանքին, որ ժամանակակից պայմաններում եթե նույնիսկ բուհական համակարգը տվյալ ժամանակահատվածում կարողանա ապահովել աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն, ապա բավական կարճ ժամանակ անց այն կարող է այլևս արդիական չլինել՝ կապված տեխ-

նոլոգիաների և գիտելիքի փոփոխության այժմյան տեմպերի հետ: Հետևաբար մշտական և կայուն կապն աշխատաշուկայի և բուհական համակարգի միջև խիստ անհրաժեշտ է:

Ուսումնասիրելով բուհից աշխատաշուկա անցնելու հնարավորությունները, կարելի է համոզվել, որ աստիճանաբար դժվարանում են անցման գործընթացներն ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում, որոնք պայմանավորված են հետևյալ հանգամանքներով.

- պետական կազմակերպություններում ու գերատեսչություններում աստիճանաբար խստացվում են քաղաքացիական ու համայնքային ծառայողների աշխատանքի անցնելու օրենսդրական պահանջները,
- մասնավոր ընկերություններում՝ հատկապես մարզերում գործող, աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեջ գործում են ստվերային պայմանավորվածություններ, որոնք ստեղծում են ոչ օբյեկտիվ հանգամանքներ բուհի շրջանավարտի համար՝ աշխատանքի անցնելու հարցում,
- մարզային զբաղվածության կենտրոնները հիմնականում ստանձնել են գործազուրկների գրանցման գործառույթներ, իսկ այդ խավի համար աշխատանքի անցնելու համակարգված ծրագրեր, որոնք կարող են իրականացնել բուհերի հետ, չեն կատարվում:

Նշված բոլոր խնդիրներն արդյունք են բուհ-աշխատաշուկա հարաբերությունների ցածր մակարդակի, որոնք ակնհայտ դրսևորվում են հատկապես մարզերում:

Գործող օրենսդրության համաձայն քաղաքացիական, պետական, հատուկ կամ համայնքային ծառայության ոլորտներում աշխատանքի անցնելու համար հավակնորդները պետք է հանձնեն քննություններ պետական կամ համայնքային մակարդակներում ստեղծված հանձնաժողովներում, որոնք կազմում են քննությունների հարցաշարերը: Այդ հարցաշարերի համաձայն՝ որը օրենքի պահանջ է, մասնագիտական հարցերը կազմում են ամբողջի մոտ 20-30%-ը[1]: Մնացած մասը կազմում են ՀՀ Սահմանադրության և տվյալ ոլորտի օրենսդրության վերաբերյալ հարցեր, որոնց պատասխանելու համար բակալավրի կամ մագիստրոսի կրթական աստիճանները բավարար չեն: Այսինքն բուհի շրջանավարտը օբյեկտիվ հանգամանքներից ելնելով դեռևս պատրաստ չէ իր մասնագիտությամբ անցնել աշխատանքի

[1] «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, ընդունված 2001թ-ի դեկտեմբերի 4-ին:

առանց լրացուցիչ ուսումնառություն ստանալու և քննություն հանձնելու: Դա վկայում է պետական գերատեսչությունների և բուհերի միջև ուսումնական ոլորտում իրականացվող հարաբերությունների թույլ մակարդակի մասին: Ինչու պետք է բուհի գերազանց շրջանավարտի համար պետական գերատեսչություններում կրտսեր մասնագետ աշխատելու նպատակով պահանջվի լրացուցիչ քննություններ, որոնց հարցաշարերը գրեթե կապ չունեն բուհի ամփոփիչ ատեստավորման հարցաշարերի հետ: Ուսանողը բուհն ավարտելու համար հանձնում է իր ամբողջ ուսումնառության ծրագրին համապատասխան ամփոփիչ ատեստավորման քննություն, որի հարցաշարն էականորեն տարբերվում է իր մասնագիտության բնագավառում պետական կամ համայնքային ծառայության անցնելու համար կազմված հարցաշարից:

Բուհի և աշխատաշուկայի հարաբերությունները բավականին խոցելի են ոչ միայն պետական, այլև մասնավոր հատվածում: Դա առավել ակնհայտ է մարզերում գործող բուհերի և մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար այն առումով, որ եթե Երևանում խոշոր կազմակերպությունները շատ են և որոշակի համագործակցություն կա բուհերի հետ, ապա մարզերում այդպիսի կազմակերպությունները բավականին սակավաթիվ են, իսկ մարզերի փոքր կազմակերպությունների հետ համագործակցությունը կրթական և գիտական ոլորտներում արդյունավետ չէ: Մասնավոր հատվածի հետ համագործակցության ոլորտում առկա են գրեթե նույն խնդիրները, որոնք բնորոշ են պետական հատվածին՝ բուհերի ամփոփիչ ատեստավորման հարցաշարը և մասնավոր հատվածի աուդիտի, ֆինանսների կամ հաշվապահական ոլորտներում աշխատելու համար պահանջվող հարցաշարերն ունեն բավականին մեծ տարբերություններ: Այդ պատճառով բուհերի շրջանավարտներն անցնում են լրացուցիչ վերապատրաստումներ մասնագիտացված այլ կառույցներում (օրինակ՝ Հաշվապահների ասոցիացիա[2], KPMG[3] և այլն), որպեսզի ձեռք բերեն համապատասխան որակավորումներ, որոնք տարբերվում են բակալավրի կամ մագիստրոսի կրթական ծրագրերով բուհերում շնորհվող որակավորումներից: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդպիսի կառույցներում որակավորումների ստացման համար գրեթե նշանակություն չունի բազային կրթությունը, այսինքն՝ մատուցվում են բուհերի կողմից էականորեն տարբերվող կրթական ծրագրեր, որոնք ունեն ավելի կիրառական նշանակություն: Ընդ որում, այդպիսի ծրագրերի մատուցման

[2] http://www.aaaa.am/am/subcats/52/

[3] http://www.kpmg.com/AM/en/services/Advisory/Documents/Advisory_am.pdf

դիմաց գանձվող վճարները բավականին բարձր են: Հատկանշական է, որ մարզերի բուհերի շրջանավարտները, ովքեր ցանկություն ունեն ձեռք բերելու վերոնշյալ լրացուցիչ որակավորումները, չեն կարող դրանք ստանալ մարզերում, քանի որ այդ կառույցները գործում են միայն Երևանում: Այսինքն էլ ավելի է ընդգծված բուհերի՝ հատկապես մարզերում գործող, կողմից այնպիսի կրթական ծրագրերի մատուցման անհրաժեշտությունը, որի դեպքում շրջանավարտները լրացուցիչ որակավորման կարիք չեն ունենա:

Բուհի և աշխատաշուկայի հետ կապի կարևոր օղակ են հանդիսանում նաև զբաղվածության մարզային կենտրոնները: Քանի որ այդ կենտրոնները և բուհերը պատկանում են տարբեր գերատեսչությունների, ապա նրանց միջև ստեղծվող կապը կարող է ունենալ կամավոր բնույթ: Այդպիսի պայմաններում բուհերն իրականացնում են կրթական գործունեություն, որոնք չեն կարող լիարժեք ապահովել աշխատաշուկայի քանակական և մասնագիտական պահանջները: Բուհերի և այդ կենտրոնների փոխկապվածության բարձր աստիճանը, ինչպես նաև համատեղ ծրագրերը կարող են նպաստել մարզերում գործազրկության մակարդակի նվազեցմանը:

Այսինքն բուհից աշխատաշուկա անցնելու ընթացքում առաջացող հիմնախնդիրները՝ հատկապես մարզերում, ի թիվս այլ պատճառների, պայմանավորված են ինչպես պետական ու համայնքային ծառայության, այնպես էլ մասնավոր հատվածի և զբաղվածության մարզային կենտրոնների գործունեության առանձնահատկություններով: Հետևաբար անհրաժեշտ է իրականացնել որոշակի գործողություններ, որոնք կնպաստեն վերոնշյալ առանձնահատկությունների բացասական ազդեցությունների չեզոքացմանը: Այդպիսի գործողություններ կարող են հանդիսանալ.

- Մարզերում գործող կառույցների քաղաքացիական, հատուկ և համայնքային ծառայություններում աշխատանքի անցնելու համար կարելի է սահմանել բուհի շրջանավարտի միջին որակական գնահատականի շեմ, որից բարձր միավորներ հավաքած շրջանավարտները հնարավորություն ունենան կրտսեր պաշտոններում աշխատելու, առանց լրացուցիչ քննությունների: Սակայն մրցութային պայմաններ ապահովելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել շրջանավարտի ընդհանուր կարողությունների մակարդակը՝ օտար լեզվի և տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետումը, ինչպես նաև հանրային կառավարման ոլորտի գիտելիքները:
- Բուհերում ներդնել կարճաժամկետ, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթության համակարգեր, որոնց ծրագրերը կհամապատաս-

խանեն մասնավոր և պետական հատվածների մասնագիտական գործունեություն իրականացնող աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման չափանիշներին: Դա կարևորվում է հատկապես մարզային բուհերի, կառույցների և կազմակերպությունների համար, քանի որ այդ գործընթացների՝ տեղական մակարդակներում կազմակերպելն էականորեն կնվազեցնի դրանց վրա կատարվող ծախսերը:

- Պետական աջակցությամբ ստեղծել բուհերի, մասնավոր և պետական հատվածների, զբաղվածության կենտրոնների ներգրավմամբ բազմակողմ համագործակցության ռազմավարություն, որտեղ բուհերի կրթական ծրագրերը և ամփոփիչ ատեստավորման հարցաշարերը, մասնավոր ու պետական հատվածների վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերը, ինչպես նաև զբաղվածության կենտրոնների կողմից ներկայացվող աշխատաշուկայի պահանջները հնարավորինս կհամապատասխանեն միմյանց:

Քանի որ աշխատաշուկայի հետ կապված խնդիրներն ավելի հրատապ են մարզերի համար, ապա տարածքային տնտեսության զարգացման նպատակով վերոնշյալ խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործողություններն առավել հրատապ են դառնում հենց մարզերում գործող բուհերի, կառույցների և կազմակերպությունների առումով:

АННОТАЦИЯ

Корюн Атоян, *д.э.н., профессор*
Сос Хачикян, *к.э.н., доцент*

ВОЗМОЖНОСТИ РЕГИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ С ПОМОЩЬЮ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ВЗАИМООТНОШЕНИЙ ВУЗ - РЫНОК ТРУДА.

В РА развитие региональной экономики на сегодняшний день имеет множество проблем, из которых подчеркивается так же создание рабочих мест. Очевидно, что создание рабочих мест не является самоцелью и нужно обеспечить соответствующими кадровыми ресурсами. С этой точки зрения важную роль играют действующие высшие учебные заведения регионов, функциями которых должно быть так же установление взаимоотношений с рынком труда и осуществление краткосрочного и неформального образования.

ANNOTATION

Koryun Atoyan, *Dr., Professor*
Sos Khachikyan, *PhD, Associate Professor*

THE OPPORTUNITIES OF THE DEVELOPMENT OF REGIONAL ECONOMY BY IMPROVEMENT OF RELATIONSHIP POLICY BETWEEN HIGHER EDUCATION INSTITUTION AND LABOR MARKET

The development of regional economy of the Republic of Armenia has numerous problems in nowadays and the more important of which is the creation of workplaces. Obviously, the creation of workplaces is not just for to do and it is necessary to provide appropriate human resources. In this respect the higher education institutions acting in the regions have a significant role, the functions of which should be emphasize towards the establishment of relationship with labor market and in the framework of this action should be implement short-term and non-formal education.